

ՅԻՍՈՒՍ ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐՄՆԱՅԱԻ “ԵՒ ԲԱՆԸ ՄԱՐՄԻՆ ԵՂԱԻ”

1. Սրտէն է Որ Կեղևն...Աստուծոյ Սէրը
Եւ Ինքնութիւնը
2. Սուրբ Պատարագ
3. Սեռայնաբանութիւն
4. Վկաներ Պիտի Ըլլաք Ինծի Համար

**WHY JESUS WAS INCARNATED?
WHY "THE WORD BECAME FLESH"?**

**ԱԼՊԷՌ ԿՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2009**

ՄՐՏԷՆ Է ՈՐ Կ՛ԵԼԼԵՆ . . . ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՐԸ՝ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Միրտը մարդու արիւնատար համակարգի կեդրոնական օրկանն է: Հրէական հոգեբանութեան մէջ *տիրակալուդ ազդակը՝ սի՛րտն* էր: Միրտը կը միաւորէ և կ'օղակաւորէ մարդու թէ՛ անձնակա՛ն կեանքը և թէ՛ անոր հոգեկա՛ն գաղափարաբանութիւնը:

Քրիստոսի Աւետարանին մէջ *«տիրաւ»* բառը ընդհանրապէս իր սովորական՝ ֆիզիքական իմաստով չէ՛ որ կը գործածուի, այլ՝ փոխաբերական նշանակութեամբ՝ *միտ*՝ այսինքն՝ խորհողութեան, դատողութեան և կամեցողութեան կեդրոն (Ճառագայթումի մեկնակէտ՝ կորիզ) -- Մատթ. ԺԲ. 34, ԺԵ. 18-19, Մար. Բ. 8, Ղուկ. Գ. 15: Իսկ սիրտը՝ աղբիւրը մեր հոգեկան երեք կարողութիւններուն՝

ա. միտ, բ. զգացում գ. կամ,
որ ձեւ և կերպարանք կու տան մեր անձնաւորութեան:

Կենսաբաններ տակաւին նոր կ'անդրադառնան, որ մարդկային արիւնը կ'ընդգրկէ ենթակային ժառանգական բոլոր՝ յատկութիւնները ու կը փոխանցէ զանոնք անոր ապագայ սերունդին: Առաւել ան ցոյց կու տայ անձին բնորոշիչ հանգամանքը, ձիրքը և բարեմասնութիւնները:

Հրեաները չէին զանազաներ մարմնի օրկաններու ազդեցութիւնը հոգեխօսական երեւոյթներէն և յուզական տպաւորութիւններէն: Հրեայ հասկացողութեան խորիմաստ ըմբռնումով մարդ էակի սրտին մէջ կը բնակէր խորհրդագագ մտածումներ, դիրքորոշումներ, վախն ու ապագայի յոյսը, որոնք կը սահմանեն ու կը վճռեն անձի մը նկարագիրը և իսկութիւնը: Նոր Կտակարանի լուսաբանութեամբ ու մեկնաբանութեամբ, Առաքեալներ յայտնեցին, թէ՛ Աստուած ու նաեւ սատանան կրնան կերպարանափոխել մարդը և անոր բնաւորութիւնը, ներմուծելով ու ներհաստատելով բարի կամ չար մտածումներ, խորհուրդներ և կամեցողութիւններ:

Այն աշակերտը (Պետրոս) որ վկայած էր Յիսուսի Աստուածորդի ըլլալը և ստացած *վէ՛՛* տիտղոսը Աստուծոյ ձոգիին ներագդեցութեամբ, քիչ յետոյ կ'ենթարկուի Մատանայի՛ն մտածումներուն ու Յիսուս զայն կը սաստէ, ըսելով.

***«Ետի՛ս զնա, Մատանա՛, դուն զայթակողութիւն
ես ինձի համար, որովհետեւ բու մտածումներդ***

Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ մարդոց»

Մատթ. ԺԶ. 23, Մարկ. Ը. 33, Ղուկ. Դ. 8:

Չար նախանձը կրնայ դժոխքը ներմուծել մարդոց սրտերէն ներս: Իսկ

սերն ու ներողամտութիւնը լոյսի ցայտադիւրներ կը ժայթփեցնեն մարդոց խորաններէն ու սրտերէն ներս: Զրիստոսի մեղանուշ Ձայնը *«Եկե՛ք Ինձի»*-ն է, որ կը հնչէ մեղմ ու բաղք: Այդ ձայնը *հաղորդական* և գրաւիչ ուժ մը ունի, նորոգելու ու փոխակերպելու մեղաւորներու տառապալից կեանքը և սփոփելու համար տանչուած սրտերը:

Մտքի և սրտի սրբութիւնը գերագոյն փառքն է մարդուն: Ս. Գրիգոր Նարեկացի իր հոգիի ոսկի բուրվառին մէջ իր զգացումներու անուշահոտ կնդրուկն է, որ կը ծխէ, իբրեւ *«Ի խորոց սրտի խօսք՝ ընդ Աստուծոյ»*: Սուրբ պահուելիք միակ բաները՝ մեր սիրտը, մեր միտքը և մեր կեանքն է: Մարդ որքան մօտենայ հաւատքի ուղեծուծին, այդքան աւելի կ'ըմբռնէ կեանքի խորհուրդը՝ զԱստուած: Աստուածայայտնութիւնը կը ծագի մարդկային սրտի երկնակամարին վրայ ու կը լուսաւորէ և կ'ուղղէ միտքը: Սիրտը աւելի խոր կը զգայ, քան միտքը կը մտածէ:

Առակը կը պարունակէ բարոյական ու ոճի տակ ծածկուած ճշմարտութիւն, իսկ պատմութիւնը տեսակ մը այլաբանութիւն, որ բնութեան երեւոյթներուն **անձնաւորութիւն** կու տայ: Հեթանոսութիւնը՝ ժողովուրդի մեծամասնութեան համար ջնջուած է այսօր, բայց ո՛չ այլաբանական կամ խորհրդաւոր առասպելները: Պատմուածքներ ու խօսքեր, պատկերներ կամ նշաններ, այլաբանական վէպերու տակ թափնուած ներքին ու խորհրդաւոր այլ իմաստներ կը պարունակեն ու կը պատգամեն: Զրիստոնէութեան սկիզբը, *ձուկը*, այլաբանական նշան էր քրիստոնէայ ըլլալու, ինչպէս այժմ՝ *Մուրջ հաշիւը*:

Եղեմական պարտէզին մէջ նկարագրուած գոյգ մը անմեղներու՝ Ադամի ու Եւայի մեղանչումը, խորամանկ օձը, բարւոյ ու չարի գիտութեան ծառը, «մի ուտեր» պատուէրը, անչափահաս գոյգին, արդեօք ի՞նչ կը պատգամեն Բասնէրորդ դարու մարդոց, որ չափահասութեան ճամբուն մէջ յառաջացում ունեցած են:

Հոռմը թանգարան է գեղարուեստի ստեղծագործութիւններուն: Ռափայէլ, Պէթրովէն, Ծէյֆսպիր, Սիֆել-Անշէլօ, Ֆիրդուսի անմահ կը մնան իրենց ստեղծագործութիւններով ու ներջնչումի բարձրաթոնից յայտնութիւններով:

Կենդանաբանական դասակարգութեան մէջ՝ մարդ արարածը կը պատկանի վսեմագոյն և ամենազարգացած լինելիութեան: Մարդու հիմնական և ամենաէական զանազանութիւնը ուրիշ գոյացութիւններէն անոր գազաթնահայեաց դիրքն է, որուն հետեւանքն են միւս գլխաւոր տարբերութիւնները.

- ա. - *ձեռները* իբրեւ արդիւնաբերութեան գործիքներ,
- բ. - *քերանը* իբրեւ խօսարան,
- գ. - զարգացած *ուղեղը* իբրեւ զգայական, մտաւորական և արտայայտիչ անօթ:

Մարդ բոլոր արարածներու թագն ու պսակն է: Աստուծոյ գերագոյն և հրաշագոյն ստեղծագործութիւնը մա՛րդն է: Մարդկային կեանքը կը դադրի պարզ գոյութիւն մը ըլլալէ ու կը դառնայ արդիւնաբեր աստուածահրաշ ստեղծագործութիւն:

Եթէ համեստ ձուկը Բրիստոնէութեան խորհրդանիշը դարձաւ ու անարգ Խաչը՝ Բրիստոսի փրկագործութեան թափուն խորհուրդը, ուստի ի՞նչ պահուած է Ծննդոց գրքի բարձրարուեստ մարդու ստեղծագործութեան մէջ և ի՞նչ կրնանք դրսեւորել Ադամ ու Եւայի պատմութենէն:

Ընդունելով հանդերձ Հին Կտակարանի մարգարէներու աստուածային ներշնչումն ու առաջնորդութիւնը իրենց պատգամներուն մէջ, կը մեծարեմ Բրիստոսի՝ խօսքերը, որպէս ա՛նգերագանցելի ճշմարտութիւններ և իրա՛ւ Աստուածայայտնութիւն:

Ինչո՞ւ չի դիտել Ծննդոցի մարդ էակին պատմագրութիւնը նաեւ այլաբանական ու փոխաբերական մօտեցումով: Միթէ հաւատացեալին արտօնուած չէ՞ հետազօտել և ուսումնասիրել գրուած բնագրին *խմտտայի՛ն հարազատութիւնը*: Փարիսեցիներն ու Սադուկեցիները կը հետազօտէին Հին Կտակարանի *բառերու* և ու *կառուցածքի՛ն* ճշգրիտ վերարտադրութիւնը միայն, իսկ Յիսուս Վարդապետ մեկնաբանեց մարգարէութիւններու իրական ու հարազատ *խմտտը*: Յիսուս Բրիստոսի ու Իր ժամանակակից հոգեւորականութեան ճակատումներու իսկական պատճառը, մեր Յիրոջ *հոգեւոր* մեկնաբանութիւնները դարձան: Ան ո՛չ թէ շրջանցեց Օրէնքն ու մարգարէ-երը, այլ *մեկնաբանե՛ց* զանոնք:

Կարդանք միասին Յիսուս Բրիստոսի և Իր առաքեալին խօսքերը փորձութեան ու մեղանչումի մասին.

«Ինչ որ մարդէն կ'ելլէ, ա՛ն է որ կը պղծէ մարդս, որովհետեւ ներսէ՛ն, մարդոց սրտէ՛ն կ'ելլեն չար խորհուրդները՝ ջնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, ազահութիւն, չարութիւն, նենգութիւն եւլն...: Այս բոլոր չարիքները ներսէ՛ն կ'ելլեն ու կը պղծեն մարդս»
--Յիսուս՝ Մարկ. է. 20-23:

«Ոչ ոք, երբ փորձութեան մէջ կը գտնուի, թող ըսէ. «Աստուծմէ՛ կը փորձուիմ». Բանի որ Աստուած ինձ ենթակայ չէ փորձուելու չարէն. և չի փորձեր ոչ մէկը: Իւրաքանչիւր ոք կը փորձուի՝ հրապուրուելով և խաբուելով իր ցանկութիւններէն՝ --Յակոբոս առաքեալ Ա. 13-14:

Դիտենք մեր նախածնողաց փորձութիւնը Եղեմի մէջ: Նենգամիտ օձը կրնայ զանոնք խաբած ըլլալ, սակայն անոնց փորձութիւնը կու գայ իրենց

սրտի ցանկութենէն: Ըստ Մովսէս մարգարէի գրութեան, անոնք կը տեսնեն որ ծառը

1. «Աղէկ էր կերակուրի համար,
2. «հաճելի՝ աչքերուն,
3. «ու փափաքելի՝ իմաստուն ընելու համար»:

Մեր ծնողած փորձութիւնը եկաւ *ներսէն* իրենց սրտեն՝ ցանկութենէն: Մարդկային սիրտն ու հոգին պարտ է հակակշռուիլ որովհետեւ անոր *միտքն ու սկզբապ* տիեզերքի զօրութիւններու օթեւանն է: Բարին Աստուած ստեղծեց մարդ էակը Իր կերպարին օրինակովը, այսինքն ստեղծագործ: Աստուածակերպար մարդ, երկինքը երկիր իջեցնելով և երկրայինը երկնայինով շաղախելով ու պայծառակերպելով դարձաւ արտադրող, բեղուն և հնարող: Աչազուրկներ էին Հոմերոս, Ճոն Միլթըն, Հելլէն Քելլըր, որոնք մտքի ու սրտի լոյսին փողահարները ու ջահակիրները դարձան իրենց դիւցազներգական աշխարհահռչակ գրական ստեղծագործութեամբ:

Ուխտադրոյժ ու նենգամիտ Մատանան յուղայաբար դաւաճանեց իր Տէր Աստուածը և հրապուրեց ու խաբեց մեր անփորձ ու անչափահաս նախածնողքը, որոնց համար բոլոր հոգեկան մղումները և *պրտէն բխած խորհուրդները*, բարի ու աստուածային կը կարծուէին ըլլալ: Մատանային այս անհաւատարմութեան ու կազմակերպած դաւաճանութեան գոհ գացին Ադամ ու Եւա: Ըստ Մովսէս մարգարէին, որուն հոգեբանական տեսութիւնը զսպանակուած էր Փարառոնեան վայրագութեամբ. Մովսէս անգիտակից էր ողորմած Աստուծոյ Հոգւոյն: (Որուն առարկայական նմոյշը կը տեսնենք, երբ Մովսէս առանց դատաստանի կը սպաննէ եգիպտացի մը): Մովսէս մարգարէ իր մոլեռանդութենէն մղուած կը ներկայացնէ զԱստուած որպէս "նախանձոտ ու վրէժխնդիր." ու հետեւաբար կը վտարէ Ադամն ու Եւան Եդեմական ու երանաւէտ դրախտ պարտէզէն:

Կարծէ մեր ուշադրութիւնը փոխադրել Հին Կտակարանէն դէպի Նոր Կտակարանը ու տեսնել Յիսուս Քրիստոսի յայտնացուցած Աստուած Ճշմարիտը՝ ողորմած ու բարեգութ չայր երկնաւորը:

Աստուծոյ դիտանկիւնէն, մարդը արարչագործութեան գլուխ գործոցն է, պէտք է փրկել, պէտք է գուրգուրալ ու պէտք է սիրել մարդը: Հետեւաբար կը կարդանք Յովհաննու Աետարան Գ. 16-17ին մէջ ուր չայր երկնաւոր, կ'ըսէ.

«Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, (նոյնիսկ մեղաւոր) որ մինչեւ իսկ իր Միածին Որդին առաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ»--Յով. Գ. 16-17:

Կայ չարութիւն, կայ մեղանչում և այլասերում, բայց կա՛յ նաեւ ստեղծագործութիւն, և բարձր ողորտ, և աղօթք, և սրբութիւն, և աստուածային սէր, և ներում: Յիսուս Քրիստոսի առաքելութիւնը աստուածային ողորմութեան, սիրոյն և թողութեան գերագոյն արտայայտութիւնն է հանդէպ տառապակոծ աշխարհի: Աւագ Ուրբաթը գերագոյն ապացոյցն է Աստուծոյ անսահման սիրոյն և մարդոց անյատակ ապերախտութեան, ուրացումին և վատութեան: Մարդկային նկարագրին վատթարագոյն գիծերը և Աստուծոյ բնութեան վեհագոյն ճառագայթները կը տեսնենք Քրիստոսի խաչելութեան խաւարակուլ մթութեան մէջ:

Հօր Աստուծոյ սէրը հանդէպ Իր Որդւոյն՝ պատուանդանն է տիեզերքին ու երաշխիքը մարդոց փրկութեան: Միածին Յիսուս Իր անձնագոհութեամբ ու տեսանելի Ա. Խաչելութեամբ ջանաց ցոյց տալ աշխարհի, Հօր Աստուծոյ սէրը հանդէպ մարդկութեան: Որպէս Լոյսը աշխարհի խաւարին դիմաց, Յոյսը կեանքի ալեկոծութեան մէջ և փրկութեան Լաստը աշխարհի արիւնտ ծփանքներուն դիմաց: Յիսուս Քրիստոս Յարուցեալ Փրկիչ մեզ կը վերածնի Իր յարութեան հաւատքին մէջ, որ տեսնենք Հայր երկնաւորին սէրն ու հոգածութիւնը առ մարդ արարածին:

"Տիեզերքին կենցաղավարութիւնը խռովութիւն և բարոյական ջեղում ունեցաւ Մատանային դաւաճանութեամբ ու անոր ապստամբութեամբ-- *«էջ անոյ»* (Մատանային) *պոչը կը բաշէր կը տանէր երկնքի աստղերուն նորորոյ մատչ»*: Մարդ արարածին առանձնաշնորհեալ պարտականութիւնն է գործակցի՛լ Աստուծոյ հետ կարգադրելու համար աշխարհի փրկագործութիւնը: Ո՛չ որովհետեւ Աստուած անկարող է, այլ աստուածա *կենցաղ* մարդը Անոր աշխատակից ու որդեգիրն է: Աստուծոյ օժանդակելու միակ միջոցը, Անոր կամքին սիրայօժար կամենալ է: Ինչպէս երջանկութիւնը մենաշնորհը չէ՛ ունենորին, ո՛չ ալ ջնորհը աղքատին, տկարին կամ տգեղին, նոյնպէս ալ Աստուծոյ ծառայել և Անոր օժանդակել մեծագոյն պատիւն է բոլոր մարդկութեան: Այս մեծարանքի ճամբան և իրաւունքը կը ստացուի մի միայն հետեւելով Քրիստոսի պատուերին:

**«Գնա՛, ծախէ՛ ինչ որ ունիս և աղքատներուն տո՛ւր
...և ա՛ռ խաչդ ու եկո՛ւր իմ ետեւէս»--Մարկոս Ժ. 21:**

Աստուածային սէրը սփռուած է համայն գոյացութեան մէջ ինչպէս մարդկային ձայնը բատիոալիքներու միջոցով: Անոր Միրոյն հետ հաղորդուիլը բոլոր գոյացութիւններու սրամադրելի է անխտիր: Որովհետեւ Աստուած *սրբութիւն* է, մեղաւոր ու անկատար մարդ արարած կարիքը ունի ապաշխարելու, փոխակերպուելու, հոգիով ու հայեցակէտով նոր ստեղծուելու, որպէսզի ուղիղ ճանչնայ իր առանձնաշնորհումները և հասնի կատարե-

լուծեան: Յիսուս Քրիստոսի պայմանը միթէ չափազա՞նց կ'երեւի մեզի: Ինչպէս առնենք գեղարուեստի հետեւողները: Ո՞վ կը փափափի երկրորդական ու երրորդական դիրք գրաւել պարարուեստի մէջ: Ո՞վ չ'ուզեր փոխանութեան հասնիլ ողիմպիական խաղերու մէջ: Ո՞ր երգիչը չի փափափիր դառնալ աշխարհահռչակ: Տոյց տուէ՛ք երաժիշտ մը, որ իր ասպարէզին մէջ չ'ուզեր գրաւել առաջնակարգ դիրք մը: Ուստի զԱստուած ճշմարտապէ՛ս ճանչնալու համար, հաւատացեալը պարտական է ըլլալ աննախապաշար, սուրբ և հաղորդակից երկնային խուրճուրդներու:

Արեւմտեան ասիերուն վրայ մեզ շրջապատող զանազան հոսանքները՝ մարմնի զգայարանական հաճոյքները և դպրոցական դաստիարակութիւնը կէտ նպատակ դարձած են Բայբայելու Քրիստոնէութիւնը: Մարդու գոյութիւնը և պատմութիւնը պատահական և աննպատակ իրողութիւններ չեն: Տիեզերքը կոյր փոթորկումներու ակնթարթի մը գոյացութիւնը չէ: Կեանքը նպատակ մը հետապնդե՛լ է պայքար մըն է *կատարելութեան* հասնելու: Մարդկային կեանքը առանց յաւիտենական կեանքի, անիմաստ ու աննպատակ գոյութիւն մըն է: Այսօր ճշմարիտէն աւելի կը տիրէ ճշմարտա *նախը*, և կը հետապնդուի Բողոքական կամ բարոյական **տնձնասիրակա՞ն** նպատակը՝ շահերը:

Յիսուս երկար չապրեցաւ աշխարհի վրայ, սակայն Իր կեանքով ու նուիրումով ապրեցուց ուրիշները: Նահատակներ կ'ապրին իրենց գործերով ու վկայութիւններով: Յիսուսի կեանքը գերազանց օրինակն է խոնարհութեան և տնձնագոհութեան: Առարկայական ու ոչ միայն տեսաբանական: «Զգտում»ը իր մէջ ունենալու է նաեւ ծառայութեան և նուիրումի նշանակութիւնը: Կեանքը պարտի դառնալ հանդիսարան հաւատքի, սիրոյ և նուիրումի:

Նպատակ դարձած աշխատանքը նոր տեսակի նիւթապաշտական հեթանոսութիւն է: Եթէ մամոնան նպատակ ու պաշտամունքի առարկայ դառնայ, այդ ուրացութիւն է Աստուծոյ: Միայն նիւթական հագոթանքը առանձին, զուտ փորձութիւն է և աննպատակ: Եկեղեցիին կոչումն ու նպատակն է ներքին, հոգեւոր վերածնութիւնը, "նոր արարած" դառնալու իրողութիւնը: Իւրաքանչիւր եկեղեցի նոյն նպատակին հասնելու առանձնայատուկ միջոցները ունի: Երբ նպատակը *միջոցի կը վերածուի*, և միջոցը՝ նպատակի, երկուքն ալ կը սուլուեն և կ'այլասերին: Մեր գոյութեան և էութեան կէտ նպատակը՝ *աստուածանման*, ըլլալ է:

Ի՞նչ է **աստուածանմանութիւնը**:

Աստուածա *նախը*, ըլլալը, աստուածա *կերպար*: ըլլալ չէ: Աեզ ստեղծող Արարիչ Աստուած շնորհած է մեզի Իր ուրոյն կերպարը: Սակայն աստուածա *նախը* դառնալ կը նշանակէ այդ կերպարը թանձրացնել կամ առարկայացնել: Օրինակ՝ ծնողք մը կրնայ ի՛ր դիմագիծը տալ զաւակին, հասակը, մազերուն գանգուրութիւնը, աչքերուն գոյնը, սակայն միայն

զաւակը, կարող է իր ազատ կամֆով ու ընտրութեամբ *նմանիլ* իր ծնողաց առափնութեան: Ծնողք մը չի կրնար *բարոյական նկարագիր* ու պարկեշտ վարք պարտադրել իր զակին: Չաւակը ի՛նք, ի՛ր ազատ կամֆով սիրելու է ու փափաքելու է նմանիլ իր ծնողաց:

Ծնողաց կամ Աստուծոյ նմանիլը կրնայ *ցնացած* մը ըլլալ, սակայն միայն ուզելը բաւարար չէ: Իղձեր, փափաքներ ու երազներ իրականութիւն պիտի դառնան եթէ ենթական լրացնէ անոնց պարտադրութիւնը: Գիտնականներ կրնան երազել թէ երեւելի ու աներեւոյթ գոյացութիւնները պատահականութեան արդիւնք են, սակայն մարդկային փափաքները պատահականութեամբ չեն իրագործուիր, այլ *աշխատութեամբ*, զոհողութեամբ ու նուիրումով: Հայր մը չի կրնար մարգանք ընելով իր զակին մկանները զօրացնել: Չաւակը ի՛նք իջնելու է մարգադաշտ, ի՛նք ֆրոնելու է, ի՛նք հոգնելու է, որ զօրացնէ իր մկանները:

Բարոյական առափնութիւնները՝ ընկերսիրութիւն, հանդուրժողութիւն, ծառայութիւն, անձնանուիրում հոգեկա՛ն վարժութիւններ են որոնք պարտ ենք սորվիլ ու վարժուիլ: Եկեղեցին այդ վարժութիւններուն դպրոցն է իսկ մեր ամենօրեայ գործի շուկան՝ բարոյականութեան մարգադաշտն ու հոգիի ու մտքի դարբնոցն է:

Համայնապատկերի ա՛յս դիտանկիւնէն երբ դիտենք Ադամի ու Եւայի "անկումը" որ Մովսէս մարգարէ նկարագրած է Ծննդոց երրորդ գլխուն մէջ, առաւել եւս կը գնահատենք անթարգմանելի Ծնունդ Աստուածայայտութիւնը: Բարութեան Մարմնացեալ Անհատականութիւն Յիսուս Բրիստոս ո՛չ թէ Մովսէս մարգարէի նման դուրս կը վտարէ մեղանչող մեր նախածնողքը Եդեմական պարտէզէն, այլ կ'ըսէ.

«Ինծի՛ եկէ՛ք դուք բոլորդ, յոգնածներ և բեռնաւորութեամբներ, և ես հանգիստ պիտի տամ ձեզի»--Մատթ. ԺԱ. 28:

«Ես, Յիսուս, իմ հրեշտակս դրկեցի՝ որպէսզի այս վկայութիւնը տայ ձեզի: ...Եկո՛ւր: Ով որ կը լսէ՛ թող ըսէ. Եկո՛ւր: Ով որ ծարաւ է՝ թող գայ, և ով որ կ'ուզէ՛ թող ձրիաբար առնէ կեանքի ջուրէն»--Յայտ. 22. 16-17:

"Անառակ Որդիի" առակին մէջ, ո՛չ թէ անոր հա՛յրն է որ ցանկատք ու հեշտամոլ զաւակը դուրս կը վտարէ տունէն, այլ տղուն *տրտի՛ն* ցանկութիւնները ու մարմնի՛ հաճոյքները զինք կը հեռացնեն հօրենական յարկէն: Անառակը երբ զղջումի արցունքներով կը վերադառնայ տուն, հոն չի՛ տեսներ հօրենական տան դրան առջեւ, մուտքը արգիլող երկսայրի սուր, այլ բարիգալուստ ողջունող **հա՛յր** մը, արցունքախառն համբոյրներ,

մեղքերու թողութիւն, հաշտութիւն և ուրախութիւն: Յիսուս կ'ըսէ.

**«Աստուծոյ հրեշտակներուն առջեւ այսպէս
ուրախութիւն պիտի ըլլայ մէկ մեղաւորի
համար, որ կ'ապաշխարէ»--Ղուկ. ԺԵ. 10:**

Ո՛չ մէկ կրօնքի և ոչ մէկ գրականութեան մէջ հոգեկան ուրախութիւնը այսքան ակներև է ու խօսուն, որքան Բրիստոնէութեան մէջ: ՉԱստուած ըմբռնելու եղանակը չիս կոտակարանի մէջ թէ՛ վախի, թէ՛ ազգայնամոլութեամբ և թէ ալ տիրակալութեամբ էր:

**«Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է»--Սաղ. ԸԺԱ.10:
«Ահա Տէրոջը վախն է իմաստութիւնը»--Յոբ. ԻԸ. 28:**

**«Վա՛յ ձեզի՝ դպիրներուդ և կեղծաւոր փարիսեցիներուդ, որ
ծով ու ցամաք կը շրջի՛ք մէկ հասիկ նորադարձ ջահելու
համար, և երբ գանձէ՛ք ձեզմէ՛ կրկնապատիկ աւելի գեհե՛նի
որդի կը դարձնէ՛ք զայն»--Մատթ. ԻԳ. 15:**

**«Նախանձ յիսնդութիւն ու նին Աստուծոյ հանդէպ, սակայն ոչ
գիտակցաբար, Բանի որ չեն գիտակցիր Աստուծոյ արդար
ութեան՝ ...իրե՛նցը կ'ուզեն հաստատել»--Հռոմ. Ժ. 2-3:**

Վախը ամենէն ջլատիչ հոգեվիճակն է: Վախը՝ մերժումն իսկ է հաւատքին, իսկ Բրիստոս կ'ըսէ.

**«Աի՛ վախնա՛ք անոնցէ, որ մարմինը կը սպաննեն, բայց հոգին
սպաննել չեն կրնար»--Մատթ. Ժ. 28:**

**«Յիսուս մօտենալով՝ դադա անոնց ու ըսաւ. "Ուրի՛ք ելէ՛ք և
մի՛ վախնա՛ք»--Մատթ. ԺԷ. 7:**

**«Աի՛ վախնար, փոքրի՛կ հօա, որովհենեւ ձեր Հայրը հաճեցաւ
տալ ձեզի արժայութիւնը»--Ղուկ. ԺԲ. 32:**

«Թող չխռովին ձեր սրտերը և չվախնան»--Յով. ԺԴ. 27:

ՉԱստուած անգամ ազգայնացուցած ու սեփականացուցած էին հրեաները, ուստի Յիսուս՝ գերագոյն Իրականութիւնը բոլոր ժամանակներուն կ'ըսէ.

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ իսկ այսպիսի հաւատք չգտայ երբեք: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ արեւելէն ու արեւմուտէն շատեր պիտի գան և երկնի արձայութեան մէջ պիտի բազմին Արրահամի, Իսահակի և Յակոբի հետ, իսկ արձայութեան որդիները պիտի բշուին արտաքին խաւարը. այնտեղ պիտի ըլլայ լաց և ակռաներու կրճատում.»
--Մատթ. Ը. 10-13:

"Արձայութեան որդիներ" ըսելով մեր Տէրը ո՛չ թէ կը վաւերացնէ հրեաներուն նախապաշարումը, այլ ըսել կ'ուզէ. *«Ինք կը կարծէ՞ք որ "Արձայութեան" որդիներն էն»*, բայց ո՛չ: Որովհետեւ շատեր պիտի գան Արեւելէն ու այլուր տեղերէն: Բրիստոսի դիտանկիւնէն, մարդկութեան իսկական թշնամին, վախն էր, հոգն ու մտատանջութիւնը և անվստահութիւնը: Վախը փարատելու ու ցրուելու համար, Յիսուս՝ Որդին Աստուծոյ, զԱստուած ներկայացուց վեհափառօրէն որպէս *Հա՛յր երկնաւորը*:

Բրիստոնեայ հաւատացեալներ ու Յիսուս Բրիստոսը սիրողներ կը տօնեն Սուրբ Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը, որովհետեւ անցեալի կարծեցեալ դրախտային արշալոյսներու գոցուած դռները բացուեցան Բրիստոսի լոյս և Կեանք շողակաթումէն: Մարդուն յարաբերութիւնը Աստուծոյ կամֆին հանդէպ պարտ է ըլլալ սիրո՛յ շարժառիթէն բան թէ վախի: Մարդ և Աստուած կը միանան փոխադարձ սիրոյ մէջ: Յիսուս Բրիստոսի հրաշափառ Յարութեամբ, մարդ արարած փոխադրուեցաւ

դժոխքի խաւարէն դէպի աստղերը եղեմի ու յաւերժութեան:

Մարտ 16, 1995
Թորոնթօ

Ս ՈՒՐԲ Պ Ա Տ Ա Ր Ա Գ

Սուրբ Պատարագը իր խորհրդաբանական հանգամանքով, կը ներկայացնէ զգալիօրէն և յայտնապէս նոյնինքն մեր Փրկիչը Յիսուս Զրիստոս՝ Մարդեղացեալ Աստուածնորդին: Եկեղեցիներու մէջ ամէն Կիրակի մատուցուած Ս. Պատարագը Զրիստոսի զոհաբերութեան խորհուրդն է: Յիսուս Զրիստոս Իր զոհաբերութեան խորհուրդով մեզ ալ կը հրաւիրէ զոհաբերութիւն ընել՝ ծախել մեր ունեցածը, ուրանալ մեր անձը և հետեւիլ Իրեն: Եկեղեցի ըսուածը այս իսկ է. **“Հաղորդութիւն Արքոց”**:

Եկեղեցիներու մէջ ամէն Կիրակի մատուցուած Ս. Պատարագը Զրիստոսի զոհաբերութեան խորհուրդն է որ հաւատացեալները կը փառաբանեն, և կը հաղորդուին՝ իրենց անձը նուիրելով Աստուծոյ ծառայութեան:

“Պատարագ” բառը կը նշանակէ նաեւ “նուէր կամ ընծայ”, որ աւելի ուշ սկսաւ գործածուիլ նաեւ “ծառայութեան” համար (տեսնել Հր. Աճառյանի “հայերէն Արմատական Բարարան”): Մոգերը իրենց գանձերը բացին ու Մանուկ Յիսուսին պատարագ՝ ընծայ մատուցին ոսկի, կնդրուկ և զմուս: Սուրբ Խաչելութեամբ, Յիսուս բացաւ ու ցոյց տուաւ Իր Մի՛րսը բոլոր մարդոց, որպէս ներում և շնորհաբաշխ թողութիւն:

Զրիստոս երբ աշխարհ մտաւ՝ Իր Ա. Ծնունդ Մարդեղութեամբ, ըսաւ.

«Զոհեր և պատարագներ չուզեցիր, այլ պատրաստեցիր մարմին մը ինձի համար: Բեզի հաճելի չեղան ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր: Այն ատեն ըսի. “Ահա ասիկ կու գամ Բու կամքդ կատարելու, ո՛վ Աստուած (ինչպէս որ իմ մայրս գրուած է օրէնքի գրքին մէջ)»-Եբր. Ժ. 5-7:

Վերի համարին մէջ յիշուած *«Բեզի հաճելի չեղան ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր»*-ը կը նշանակեն թէ Յիսուս, նման Հին Կտակարանի զոհագործուող ողջակէզ մը պիտի չ’ըլլար, այլ տարբեր զոհաբերութիւն մը: Սոյն տարբերութեան համար հեղինակը կը շարունակէ ըսելով.

«Զոհեր, պատարագներ, ողջակէզներ և մեղքերու համար մատուցուած զոհեր հաճելի չեղան Բեզի, և դուն չուզեցիր»

Ապա կ’ըսէ.

«Ահա ասիկ կու գամ Բու կամքդ կատարելու, ո՛վ Աստուած»-Եբր. Ժ. 8-9:

Ուրեմն ինչպէ՞ս, և ի՞նչ կը նշանակէ Յիսուսի Պատարագին իմաստն ու Խորհուրդը՝ **«Բու կամքդ կատարելու»** ասոյթը: Զեմ հաւակնիք ըսել թէ *ես*.

գիտեմ: Մակայն որպէս աշակերտ ու համեստ հետեւող մը Յիսուս Զրիստոսի, չեմ կրնար չխորհրդածել և չորոնել ինձի ջնորհուած պարգեւներու *հոգեկան և մտածողական* պարունակին մէջ:

Ուստի, խորհրդածութիւններս կը ստիպեն ինձ հարցնել: Եթէ հաճելի չե՛ն *Աստուծոյ մատուցուած* արջառներու *գոհերն ու ողջակէզները* և Ան չ՛ուզեր ընդունիլ զանոնք: Ուրեմն ինչո՞ւ Յիսուս՝ Որդին Աստուծոյ զոհուեցաւ Խաչին վրայ:

Միթէ Աստուած հեթանո՛ս աստուածներէն մի՞նն նկատուելու է, որոնք անպայման մարդագոհութիւն կ՛ուզեն...: Հեթանոս կրօնքի շրջանին *Մոդոն չատուածը* կար, որ ապրելու համար մարդկային գոհեր կը պահանաջէր: Յիսուս Որդւոյն ներկայացուցած Աստուածը՝ Հա՛յրն է համայն մարդկութեան և ո՛չ անխիղճ անանձնաւորեալ զօրութիւն մը միայն: Մարդեղեալ Յիսուս բացաւ զոհողութեան գերագոյն ճամբան, արիւնի ու Գողգոթայի ճանապարհով, ուր ցոյց կու տայ ոչ միայն Ի՛ր զոհողութիւնը, այլ նաեւ Հօր Աստուծոյ Անձնագոհութիւնն ու սերը հանդէպ աշխարհամարդուն:

Ուստի, եթէ Մարդեղեալ Յիսուսի զոհողութիւնը համահաւասար և համանման պիտի սեպենք Հին Կտակարանի զոհերուն, որոնք նուիրուած էին Աստուծոյ, ուրեմն Մեր Տիրոջ զոհաբերութիւնը (Հօր Աստուծոյ կամբով), որո՞ւն ուղղուած էր: Եթէ չենք կրնար սոյն հարցումին պատասխանել ու ջանանք շղարջել զայն **«խորհուրդ»** բառով միայն. նախընտրելի է բնաւ չխօսիլ այդ նիւթին մասին:

Ս. Պատարագի խորհուրդին կարճ և լրիւ իմաստը՝ *«Զրիստոս պատարագուելով կը բաջխուի հաւատացեալ աղօթողներու միջեւ...»* Մարդկութեան հոգին ու խիղճը ցնցելու նպատակաւ Յիսուս Զրիստոս կը զոհաբերէ Իր Անձը: Աստուած Իր սիրո՛յն ու տառապանքին՝ հոգիի չարչարանքին ու վիջտին ընդմէջէ՛ն խօսելով մոլորած մարդկութեան, կը ջանայ Իրե՛ն վերադարձնել մեղանչական մարդը: Մարդ երբ ականատես ըլլայ իր անաւոր բարոյական սխալանքին և անկումին հետեւանքը, որով տառապեցուցած է մարդասէր՝ Արարիչը (Աստուած կը տառապի Բանգի ջատ կը սիրէ նոյնիսկ մոլորած և ջիւթահար մարդ արարածը), ա՛յն ատեն կը սկսի մեղաւորին (Անառակ Որդիին) դարձը դէպի Հայր Աստուած:

Ս. Պատարագի պահուն կը կերակրուինք Զրիստոսի Մարմինով և կը հաղորդուինք Անոր Արիւնով որպէսզի մասնակից ըլլանք Իրեն: Կը մտերմանանք Անձնաւորութիւն և Հեղինակութիւն եղող Աստուծոյ հետ Իր Որդւո՛յն Զրիստոսի միջնորդութեամբ: Հաղորդուիլ կը նշանակէ ներջնչուիլ յաղթական Յարուցեալին հետ, ճանչնալ Զայն ու Անոր զօրութիւնը և **մասնակից ըլլալ Անոր տառապանքին** որպէսզի այս կերպով (մե՛նք եւս) հասնինք (արժանի ըլլանք) մեռելներէն յարութիւն առնելու -- Փիլիպ. Գ.10-11:

Հին Կտակարանի արջառներու զոհաբերութիւնը ուղղուած էր Աստուծոյ

որպէս աղօթք, աղերս ու խնդրանք, մարդ արարածներու կողմէ: Իսկ Յիսուս Զրիստոսի Ա. Խաչելութեան զոհաբերութիւնը, Աստուած կ'ուզէ դէպի **մա՛րդ արարածը**, որպէսզի ան տեսնէ՝ իր մեղանչումը և զղջումով դառնայ Հօր Աստուծոյ: Ոճ, ի՞նչ հիասքանչ Արարիչ է Աստուած: Տիեզերք մը ուր 100 միլիար ծիր կաթիններ (galaxy) կան, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ անլի քան 100 միլիար աստղ, կը յայտնացուցանէ ոչ միայն ստեղծագործ զօրութիւնը անճառելի Արարիչին, այլ նաեւ Անոր անճառելի **սէրն** ու մարդու փրկագործութեան համար անձնագոհողութիւնը նոյնիսկ Իր սիրելի Որդւոյն ջրթներով, որ կ'ըսէ քեզի և ինձի.

**«Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինս»
 «Խմեցէ՛ք անկէ ամէնքդ ալ, որովհետեւ
 այդ է նոր ուխտի իմ արիւնս, որ կը
 թափի ջրատերուս վրայ՝ մեղքերու
 թողութեան համար»--Մատթ. ԻԶ. 27-29:**

Բոլոր կրօններն ու հաւատալիքները սխալ և անճիշտ հասկցած էին զԱստուած և Անոր արդարութիւնը և աղերսը՝ մարդ արարածին հետ: Յովհաննէս առաքեալ իր աստուածայայտ իմացումով կը գրէ իր Աւետարանի առաջին գլուխ 17-րդ համարին մէջ, ըսելով.

**«Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը
 Յիսուս Զրիստոսի միջոցով եղան»:**

Մինչեւ Յիսուս Զրիստոս՝, որ է ճշմարիտ Աստուածայայտութիւնը, մարդիկ ջանացին *հաճեցնել* զԱստուած զոհելով իրենց **աւելցուքէն՝** կենդանիներէն ու հացէն: Աէ՛կ անգամ իսկ մարդ արարած չի մտածեց ուրանալ և զոհել ինքզինքը՝ ի՛ր հպարտութիւնը, փառամոլութիւնը, հեշտասիրութիւնը, ատելութիւնը և վրէժխնդրութիւնը: Վերոյիջեալ պատճառներով, Մովսէսէ, մօտ ութը հարիւր տարի յետոյ, Աստուած Ովսեայ մարգարէին բերնով, կը գրէ. Զ. 6:

**«Զանգի ես ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զոհ,
 և ողջակէզներէն աւելի՝ Աստուծոյ գիտութիւնը»:**

Եսայի մարգարէին անունը կը նշանակէ *«Եմովա փրկութիւն է»*: Ան ապրեցաւ Ն. Բ. 759-690 շրջանին ու մարգարէացաւ մօտ 60 տարի: Եսայի ոչ միայն ունեցաւ Հոգիին ներշնչումը, այլ նաեւ հասկցաւ սոյն յայտնութեան **իմա՛սար** ու կոչուեցաւ "Աւետարանիչ": Եսայի մարգարէն շնորհը ունեցաւ թափանցելու Աստուծոյ խորհուրդին ու դարբերու համար քանդակեց ըսելով.

*«Ի՞նչ պէտք է ինձի ձեր զոհերուն շատութիւնը, կ'ըսէ Տէրը. Ձեր խոյերուն ողջակէզներէն
 և պարտա անասուններուն ճարպէն կշտացած եմ:
 Եւ զուարակներուն ու գառներուն
 Եւ նոյնազներուն արիւններէն չեմ փխորժիր:
 Եւս երբ աղօթքնիդ կը շտացնէ՛ք, պիտի չլսեմ.
 Վասնզի ձեռներնիդ արիւնով լեցուն են»--Ա. 11, 15:*

Աստուած կը հակադրէ մարդուն կեղծ, շինծու ու երեսութական զոհաբերութիւնը, Իր **ճշմարիտ ու շնորհաբաշխ** զոհաբերութեամբ: Աստուծոյ համար արդարութիւնը, ո՛չ թէ վրէժխնդրութիւն է մարդու անհնազանդութեան դէմ, այլ՝ Ան **կը ներէ՛** ապաշխարող ու զղջացող մեղաւորը Իր անուն ողորմութեամբ, անսպառ սիրով ու շնորհով: Մոյն առարկայակա՛ն, շօշափելի ու տեսանելի շնորհ-ընծայումը Ան ցոյց տուաւ Գողգոթայի վրան: Ո՛չ թէ **պահանջելո՛ւմ**, որ Յիսուս Որդին սպանուի, ու Անոր մեռած Մարմինը Իրեն ընծայուի, այնպէս ինչպէս Ակամեմնոն ըրաւ իր մատղաջ աղջիկը (Իֆիժէնեա)ն խողխողել տալով ծովերու աստուծոյն, այլ՝ որպէսզի մարդ արարած, Գողգոթայի Ա. Խաչելութեամբ տեսնէ՛ Անոր Որդւոյն ցաւատանջ մահը, (մարդու մեղանչումին որպէս հետեւանք) և չօր Աստուծոյ անհանգրուան, անսկիզբ և անվախճան սէրը, ու մարդ գեղջի գայ, ապաշխարէ ու հաղորդուելով Պատարագեալին Մարմնէն ու Արիւնէն, ստանայ յաւիտենական կեանքը:

Յիսուս «Մարմին եղա՛ւ», ապրեցա՛ւ, գործեց: Գիրք մը չի տուաւ մարդկութեան, Ան՝ *Ինձի՛նձ* տուաւ: Ան ինձի՛նձ **ամբողջովին** բաշխեց, ընծայեց անվերապահօրէն, առանց պայմանի, անսակարկ ու անխարդախ:

Յիսուսի կրօնքին հիմնաքարը սէրն է, ու շողախը՝ զոհաբերութիւն: Ան երջանկացուցած է բոլոր հաւատացեալները: Յագեցուցած է բոլոր հոգեկան ծարաւները: Ոգեկան հաց դարձաւ բոլոր Զինք սիրողներուն: Յիսուս ջո՛ւր հրամցուց ծարաւին, հաց՝ քաղցածին, բժշկութիւն՝ հիւանդին, յոյս՝ սրտաբեկին ու յետոյ բեկանելով Իր Մարմինն ու Արիւնը սրբարար Խաչելութեամբ, բաշխեց Զայն բոլորին: Տալն ու տրուիլը սիրո՛յ արտայայտութիւններ են: Յոյսի և գոյատեւման համար, Մարդեղեալ Յիսուս **մեռնելո՛ւմ** կարողացաւ բաշխել Իր սրբարար Մարմինը բեզի և ինձի: Այդ սրբազան Ընծայումի ընդմէջէ՛ն ըսաւ աշակերտներուն, **«Առէ՛ք, և կերէ՛ք»**--Յով. Զ. 54-59.

«Ես եմ կենդանի հացը որ իջած է երկինքէն. եթէ մէկը այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի տարի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ Մարմինս է զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չուտէ՛ք Մարդու Որդիին Մարմինը, և չըմտէ՛ք Անոր Արիւնը՝ ձեր մէջ կեանք չէ՛ք ունենաք»։ Ով որ կ'ուտէ իմ Մարմինս և կ'ըմտէ իմ Արիւնս՝ յաւիտենացան կեանք ունի. և ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր»--Յով. 2. 47- 63:

Պատարագի Սուրբ Հաղորդութեան պահուն, Յիսուս պատուեր մը կու տայ Իր աշակերտներուն, որ թէեւ անտեսուած է սակայն չափազանց խորիմաստ է։ Ան կ'ըսէ. Ղուկ. ԻԲ. 19:

«Այս բանը ըրէ՛ք իմ յիշատակիս համար»։

Ի՞նչ կը նշանակէ *“Այս բանը ըրէ՛ք”* պատուերը: Հպանցիկ ակնարկով այնպէս կը թուի մեզի, թէ ամէն անգամ որ մասնակցինք Ս. Հաղորդութեան Ձինք յիշենք: Իւրաքանչիւր հաղորդուող, ժամ մը Ս. Պատարագի ներկայ ըլլալէն յետոյ, անկասկած Ձինք յիշելո՞ւն համար կը հաղորդուի, և ոչ ուրիշ նպատակով: Միթէ Մեր Տէրը ա՛յոքֆան փառասեր էր որ Ձինք յիշելու համար ընենք: Ո՛չ, այլ *“այս բանը ըրէ՛ք”* պատուերը ունէր խորատոյգ խորհուրդ մը:

(Յետագայ խորհրդածութիւններս համեստ մտածումներ են միայն):

*«Այս բանը ըրէ՛ք»*ը ոչ թէ միայն պատարագող քահանային Ս.

Հաղորդութիւն *մատակարարելէ* է հաւատացեալներուն, այլ ուղղուած է բոլոր հաւատացեալներուն, որոնք կը մասնակցին Յիսուսի Բեկանեալ Մարմինը ճաշակելով, իրենք զիրենք պարտաւորութեան կ'ենթարկեն **“ըրէ՛ք”ի** մը, որուն նպատակը կը գտնուի մի միայն յիշելու մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսի **արարքը**:

Հաւատացեալ՝ Յիսուսի աշակերտողը **ուխտաւոր** մը կը դառնայ ճաշակելով Անոր Մարմինը: Ան Մովսէսի Օրէնքին հետեւող մը չէ՛ այլեւս, այլ իր Տիրոջ Յիսուսին: Մարդեղեալ Յիսուսի վերջին արարքը եղաւ **բեկանուիլ՝ կոտորուիլ և մեռնիլ**: Ուստի ամէն անգամ որ հաւատացեալ մը կը մասնակցի Տիրոջ Մարմնին ու Արիւնին, պարտ է յիշել ու գիտնալ, թէ ինք աշխարհի վրայ այլեւս իր իրաւունքը փնտռելու չէ՛: Իր արժանապատուութիւնը և անձնապաշտութիւնը պարտ է կոտրել: Իր “ես”ը պէտք է ուրանալ: Ինչո՞ւ, որովհետեւ հաւատացեալը մասնակցելով, Ինքզինք զոհաբերո՞ղ Տէր Յիսուսի Սուրբ Հաղորդութեան, *ուխտած կ'ըլլայ նաեւ մասնակցիլ ու ջարտ նակել իր Տիրոջ չարչարանքները և անձ նուրացութիւնը, վկայել*:

Պօղոս առաքեալ այս մասին շատ իրատես կերպով կ'արտայայտուի, ըսելով.

Առաջին.– *« Զա՛ն լիցի որ ես պարծենալու ուրիշ բան ունենամ, բան*

մեր Տէր Յիսուս Զրիստոսի խաչը միայն, որով աշխարհը խաչը ելած է ինձի համար, ես ալ՝ աշխարհի» --Գաղ. Զ. 14:

Երկրորդ. -- *«Այսուհետեւ թող ոչ ոք նեղութիւն պատճառէ ինձի, որովհետեւ ես իմ մարմնիս մէջ կը կրեմ Զրիստոսի չարչարանները»* --Գաղ. Զ.17:

Յիսուս Զրիստոս Իր գոհաբերութեան խորհուրդով, մեզ ալ կը հրաւիրէ գոհաբերութիւն ընել: Հետեւիլ Իրեն, ուրանալ անձը և անձին մղումները և ցանկութիւնները:

Կը խոստովանիմ թէ ջատ դժուար է ուրանալ մեր իրաւունքը: Մակայն պատուէրը Անկէ է, որ ուրացաւ Իր իրաւունքը ու մեր փրկութեան համար յանձն առաւ բեկանուիլ և կոտորուիլ: Հետեւաբար, սոյն պատուէրը ունի իր մէջ նաեւ պարզ պատասխանը, որ է. *«Այս բանը քրէ՛ք իմ յիշատակիս համար»*: Այսինքն, Զիս կրեմք յիշել մի միայն երբ *դուք եւս յանձն կ'առնէ՛ք բեկանուիլ և կոտորուիլ նման ինձի*: Կ'ըսէ Յիսուս մեր Փրկիչը և Աստուածը:

Նոյեմբեր 22, 1997
Թորոնթօ

ՊԱՏԱՐԱԳԵԱԼ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ

**«Դուն որ նիւթերուն մէջ ամենէն նիւթականն ես:
Դուն մեր երգն ես, մեր կանչը, մեր գաղափարը,
իդէալը, իմաստը գաղափարաբանութիւնը: Մեր ուժը:
Դուն մեր ամենէն հոգեկանն ես:
Դուն՝ ամենէն շօշափելին, նաեւ՝ անտեսանելի կապը
հայրերուս, նախնիքներուս, ցրուած արենակիցներուս հետ:
Դուն՝ այսօրուան աղօթքս:
Պարզէ՛ անբացատրելի խորհուրդը այդ հրաշքիդ:
Բու բեկանեալ Մարմինին:
Ով անթափանց, փակ խորան, խորհրդաւոր աշխարհ:
Հրաշքները բացատրութիւն չունին:
Եթէ ունենային՝ արդէն հրաշք չէին ըլլար»:**

--Հեղինակը անծանօթ

ՍԵՌԱՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Sexualism

Մաս--Առաջին

Ինչպէս ազատ կամքն ու խօսելու կարողութիւնը աստուածային պարգեւներ են, նոյնպէս և առաւել, սեռային մղումները աստուածատուր շնորհներ են սրուած մարդուն իր Արարիչ Աստուծմէ: Սեռային զգացումը իր բազմաճառար ձեւերով, սկսեալ ամենանախնական բջիջէն մինչեւ բարձրագոյն արարած մարդը, կենսաւորող և ստեղծագործող զսպանակուած մղիչ ուժ մըն է: Սեռային զգացումը կենդանական աշխարհի հզօրագոյն մղումն է՝ նման ուտելու: Առանց այդ խորհրդաւոր և անզուսպ բնագոյին, աշխարհ պիտի կորսնցնէր իր արտադրած բուսականութիւնը և կենդանական գոյացութիւնը, ու դառնար այլ արեգակնային մոլորակներու նման անբարեբեր և անբնակելի ամայութիւն:

Մարդ-արարածէն զատ մնացեալ բոլոր բուսական ու կենդանական աշխարհը, ցարդ, արտադրած է ոչինչ, բացի ի՛ր նմանէն: Մի միայն մարդ-արարածին կը պատկանի արուեստագէտ ճարտարապետ հեղինակի արդար իրաւունքը:

Մարդ արարածը տէ՛րն է բնութեան արտադրած բոլոր գոյացութիւններուն: Որովհետեւ մարդ կը գոյատեւէ հնարելո՛ւ և կառուցանելու, փոխակերպելո՛ւ և բարեշրջելու այն՝ ինչ որ անբան բնութիւնը անկարող է իրագործել: Բացի մարդէն, բոլոր գոյացութիւններու միակ նպատակը սերնդագործել է իրենց յար և նմանը, ոմանք արագ և ոմանք ալ դանդաղօրէն: Մի միայն մարդ-արարածն է որ թէ՛ կ'ըստեղծագործէ իր նմանը և թէ՛ կը փոխակերպէ երկրագունդի գետերուն հոսանքը կառուցանելով հրաշալի ջրանցքներ ու կը զարդարէ երկրի դիմագիծը ճարտարապետական վիթխարի ու գեղեցիկ ջինարարական կառուցումներով: Ըլլան անոնք երկնաւազ ջէնքեր, հսկայ կամուրջներ, կախարդական զմայելի թատրոններ և հմայագեղ աղօթատուն եկեղեցիներ:

Մարդ, աշխարհի «տէր»ը կը կոչենք որովհետեւ ա՛ն ունի բանականութիւն: զԱստուած «Տէր» կ'անուանենք որովհետեւ Ա՛ն մեզ հովանաւորող Պաշտպանն է: Ամուսնական Ս. Պատկին երբ այր մարդը կ'ընդունի «տէր» ըլլալ իր կնոջ, այդ չի նշանակեր ըլլալ «*բռնասէր*», այլ հովանաւորող ոյժ և ապահովութիւն: Երբ կ'ըսենք «այս մարդը իր խօսքին տէրն է», ըսել կ'ուզենք, վստահելի և պատուաւոր, ան գեղծարարութիւն չ'ըներ: Երբ երեխայ մը որք է և տէր չ'ունի, կրնայ ան ջահագործուիլ կամ նոյնիսկ ծախուիլ որպէս գերի:

Մարդ արարածը ա՛յս իմաստով տէրն է աշխարհի: Ոչ թէ երկիրը իր պարունակութեամբ չարաջահելու և ապականելու, այլ զայն բարեշրջելու,

ինամելու և հովանաւորելու համար:

Մարդկային սեռայնականութիւնը այն ատեն կ'ալլատերի և կը վատթարանայ երբ ան կ'ուրանայ իր աստուածատուր բանական, իմացական և հոգեկան պատասխանատուութիւնները հանդէպ համայն աշխարհի: Մարդ կրնայ ուրանալ իր պատասխանատուութիւնը, սակայն կարող չէ՛ անջատել ինքզինք իր երկնատուր յատկութիւններէն և կարողութիւններէն: Ուստի՛ երբ իր, աստուածակերպար հանգամանքով և անձնասիրական հեշտա-մոլութեամբ սկսի գազանային բնագոյներու յագուրդ տալ, կը դառնայ *խտու և գազան*:

Ինչո՞ւ սեռային զգացումը կենդանական տարածքին, ***բնագոյական սեպելու ենք***, իսկ մարդկային դրութեան մէջ՝ ***գիտակցական և բարոյական***:

Պատճա՞ռը:

Բացի մարդ էակէն, բոլոր մնացեալ գոյացութիւնները կ'ապրին արտադրելու միա՛յն իրենց նմանը: Անոնց կարգախօսն ու նպատակակէտ թիրախը միայն իրենց նմանը յաւերժացնել է այս աշխարհի վրայ: Բոլորովին անգիտակից են իրենց շրջանակին: Հետաքրքրութիւնը չ'ունին դիտելու հմայիչ մայրամուտը և հոգեհմայ այգալոյսը: Ծիածանն ու աստղակամարը զիրենք չեն հրապուրեր: Կենդանական աշխարհի գազաններէն Բանի՞ն անտառային կեանքը բանահիւսած են ու երգած անոր կախարդական գիշերները:

Ո՛չ մէկ անասուն, բոյս կամ սողուն հետաքրքրուած է թողուլ անուանահետք կամ նշմարանք մը իրեն գոյացութենէն, որովհետեւ, ի՛նք իսկ **անգիտակի՛ց** է իր գոյացութեան: Անոնք կ'ապրին որովհետեւ ծնած են, բնագոյաբար կը շարունակեն այն գոյութիւնը որ իրենց նախասահմանութիւնն է:

Իսկ մարդ էակը, սկսեալ իր նախապատմական շրջանէն, չ'ունենալով հանդերձ գիր ու գրականութիւն, թողած է իր հետքը ժայռերու և ապառածներու վրայ: Ո՛չ թէ բնագոյին մղումով, այլ ներքին, հոգեկան գիտակցութեան զօրութեամբ արտայայտած է իր գերբնական ձգտումը աղօթքի և հմայութեան նկարագարդերու միջոցաւ:

Այս բոլորը կու գան ապացուցանել, թէ մարդ էակը Գերբնականին միջամտութիւնը ունեցած է: Աստուած դրոջմած է Իր կերպարը մարդ արարածին էութեան և ինքնագիտակցութեան խորքը: Հետեւաբար մարդ դարձած է գերբնական կենդանի և հոգեկան մանրաշխարհ մը, որ կը ներկայացնէ ու կը յայտնէ իր Արարիչ Տէրն ու զինք հովանաւորող Առաջնորդը:

Հոգեկան մանրաշխարհ ու գերիվեր շնչաւոր մարդը կ'ապրի ո՛չ թէ պահելու և սերնդագործելու միայն իր նմանը, այլ դաւանելու զինք հովանաւորող Պաշտպանը այն աշխարհին որուն ենթահողէն միայն ինքն է

ընտրելի առանձնաշնորհեալը, որպէս բանաստեղծ, ճարտարապետ, բանասէր, ստեղծագործ և բանաւոր խօսողը Աստուծոյ հետ:

Հետեւաբար ինքնագիտակից և աստուածակերպար մարդ արարածին համար, սեռայնականութիւնը դարձած է **միջոց** մը փոխանակ շարունակելու ըլլալ **նպատակ**: Այս պատճառաւ սեռային յարաբերութիւնը մարդկային ընկերութեան մէջ, բնագոյական շփումէ, բարձրացած ու դարձած է հոգեղէն հաղորդութիւն մը: Սոյն հոգեղէն, գերբնական և նուիրական հաղորդութեամբ՝ մարդ էակ կը մասնակցի իր իմացական, բանական և հոգեկան զօրութիւններու համադրութեան: Այն պահուն երբ մարդ ստացած է աստուածային կերպարը, սեռային զգացումը դարձած է **գիտակցական և բարոյական** արարք մը մարդ էակին համար:

Ինչպէս հայ բանաստեղծը կը գոռայ ըսելով, *«Մեզի Հայ են ասում, մեզ Հայ են կոչում»,* նոյնպէս ալ երբ աշխարհի բարձրագոյն էակը՝ *«մարդ են կոչում»* այդ կոչման ետին կը գտնուի մարդը բնորոշող *իրողութիւններ*: Համայն մարդկութեան մէջէն երբ անհատներ և բազմութիւններ դադարին ստանձնելու այդ իրողութիւններու **պատասխանատուութիւնը**, ազատ են շարժիլ բնագոյին մղումներով, սակայն նախ դասելու են իրենք զիրենք *բանագուրկ*՝ անասուններու կարգին ... :

Մարդ էակը՝ շարունակական և յարատեւ բարեշրջութեան ջրջան մը կ'ապրի, սակայն անոր ինքնագիտակցութիւնն ու բարոյագիտութիւնը ո՛չ թէ բարեշրջումի աստիճանական բարձրացում է, այլ մարդ ինք, պատմագիտութեան պանծալի սեմը թեւակոխած է որպէ՛ս **բարոյակա՛ն** օրէնքներու համապատասխանող վարք ու կենցաղագէտ էակ:

Անհամ, անհոտ և գորջագոյն հողը որ երկրի երեսը կը ծածկէ, իր նիւթեղէն էութենէն կրնայ արտադրել մարդ էակին միայն մարմնական անգիտակից բնագոյն ու մեքենական շարժումները: Մարդկային հոգեկան և բարձրաթոյն բարոյականի ակնադրիւրը Աստուած է, որ Իր սուրբ և բարի կամեցողութեամբ մարդ-արարածին շնորհած է Ի՛ր բանական և իմացական ճառագայթումէն ջող մը:

Հնդիկ իմաստասէր Ռապինդրանատ Թակոր ըսած է, «Ազատ սերը շատ ախորժելի է, սակայն՝

պատիւը՝ վեհագո՛յն արժանապատուութիւնն է»:

Փետրուար 2, 1990

Թորոնթօ

ՍԵՌԱՅՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ (Sexuality)

Մաս--Երկրորդ

Քաղաքական և կրօնական վաղ անցեալի և ներկայի պատմագիտութեան մէջ, սեռային յարաբերութիւնը չափազանց թոյլատրելի էր բայց ոչ *օրէնքի* սահմանումին մէջ: Զոր օրինակ, Յուլիոս Կայսր անպատկառ կերպով կը կենակցէր Եգիպտոսի Գլէոփաթրա Թագուհիին հետ իր օրինաւոր կնոջը ներկայութեան, որմէ նաեւ ունեցաւ մանչ զաւակ մը: Անդին, Հռոմի "սուրբ կրակ"ին պահապան կարգուած կոյսերը եթէ փորձուէին սեռային յարաբերութիւն ունենալ այր մարդու հետ, պետութիւնը կը հիւսէր զիրենք գուրբի մը մէջ ու հոն անօթի ու ծարաւ կը մահանային:

Միջին արեւելիի հեթանոս տաճարներու մէջ, սեռայնութիւնը տեսակ մը կրօնական արարողութիւն սեպուած էր: Կորնթոս քաղաքի տաճարին մէջ, կար աւելի քան հազար կին, որոնք կը սպասարկէին հանրութեան սեռայնական արգասաւորութեան, մինչդեռ իրենց բուրմերուն պարտադրուած էր ներփանալ...:

Քաղաքակրթեալ և օրինապահ ճանչցուած Հռոմէական Կայսրութեան մէջ, ազատ սեռայնութիւնը թոյլատրելի էր, մինչդեռ բարբարոս և վայրենի սեպուած հիւսիսային Եւրոպական ազգերու ընտանեկան կապը ***միա՛կնութիւն*** էր: Այդ "բարբարոս" սեպուած հիւսիսային ժողովուրդները՝ իրարու (կին և այր) բացարձակ հաւատարմութիւն կ'ուխտէին:

Մովսիսական Օրէնքին մէջ՝ բազմակնութիւնը արտօնեալ էր, թէպէտ ոմանք ծայրայեղութեան տարին, իսկ շնութիւնը մահուամբ դատապարտելի:

Քրիստոնեայ եկեղեցիներու մէջ եւս կայ անհամեմատութիւններ: Զոր օրինակ, ինչպէ՞ս ամուսնութիւնը կարելի է կոչել *«Սուրբ Խորհուրդ»* և զայն կիրարկող եկեղեցականին արգիլել որ ամուսնանայ... Իսկ եթէ ամուսնութիւնը «սուրբ» չէ՛, ինչո՞ւ զայն կոչել «Սուրբ Խորհուրդ» նոյն ինքն եկեղեցականներու կողմէ:

Կրօնական ըմբռնումով, սեռային անհաւատարմութիւնը, մահացու մեղքերու շարքին դասուած է: Ըստ Մովսիսական Օրէնքի, այդպէս հաւատալ ուղիղ կը սեպուի:

Որպէս Քրիստոնեայ, միթէ հետեւելու չե՞նք մեր Առաջնորդ Յիսուս Քրիստոսին: Նոյնիսկ Մովսէսի աջակերտող փարիսեցիներն և օրինականները [Փաստաբանները] երբ բռնեցին կին մը, շնութեան արարքին մէջ, բերին Յիսուսի և ըսին, *«Օրէնքին մէջ Մովսէս պատուիրած է մեզի այսպիսիները քարկոծել, արդ, դու ն այս մասին ի՞նչ կ'ըսես»*--Յով. Ը. 3-4

Յիսուս ի՞նչ ըսաւ արդեօք: Յիսուս ի՞նչ կրսէ մեզի այսօր ալ: Ինչպէս

Մովսէսի աշակերտողները իրենց հարցումը ուղղեցին Յիսուս Վարդապետին, նաեւ մե՛նք պարտաւոր ենք ճանչնալ Յիսուսի պատասխանը որ քիւրեղացումն է համաշխարհային իմաստասիրութեան և բանականութեան:

Ամպլոնը Յիսուսի փոխանցել է առաջ, հարցում մը կը գրգռէ մեր միտքերը: Կարելի՞ է շնութեան արարքը գործադրել առանձինն: Եթէ ո՛չ, ինչո՞ւ փարիսեցիներն ու օրինականները, շնացող կնոջ հետ չի բերին նաեւ այր մարդն ալ...:

Այժմ տեսնենք, Յիսուսի դատաստանը հանդէպ սեռային յարաբերութեան:

Յիսուս կը դիտէ Զինք շրջապատող բանազուրկ գայլերու վոհմակ՝ Փարիսեցիները: Այս կրօնաւորներու հետաքրքրութիւնը ոչ շնութիւնը արգիլել էր և ոչ ալ մարդկային ընկերութիւնը մաքրագործել, այլ՝ թակարդել էր Յիսուսը իրենց օրինական հարցաֆննութեամբ: Յիսուս կը ճակատի ծրագրուած սառ իրողութեան մը դէմ յանդիման: Անկարելից և անսեր կրօնաւորներուն, Յիսուս կը պատասխանէ Իր աստուածային հմտութեամբ և կ'ըսէ.

«Զեր մէջէն անմե՛ղը նախ թող քար նետէ ասոր վրայ»:

Յիսուս ոչ թէ բերանացի խօսքերով կը պատասխանէ իրենց հարցումին, այլ՝ Իր մատը կը միտ գետին և կը գրէ հողին վրայ: Ա՛յն հողին որմէ կերտուած էին փարիսեցիներն ու օրինականները: Յիսուս Իր մատը միւրճած էր կեղծաւորներուն քար սրտին ու քանդած անոնց կրանիտեայ անզգայ սրտերը, արթնցնելու այդ թմրած սրտերու մէջ կարեկցութիւն և մարդկային զգացում:

Մովսէսի ջատագովներն ու թշուառ կնոջ հակառակորդները՝ զղջալով, մի առ մի, հեռացան Յիսուսի անմերձենալի սուրբ Ներկայութենէն: Յիսուսի հզօր ներկայութիւնը ջախջախած էր Փարիսեցիներու քարացած սրտերը և արթնցուցած անոնց ամօթի և արդարութեան զգացումները:

Յիսուս դառնալով թշուառ կնոջ, որ զոհը եղած էր այր մարդոց, ըսաւ անոր. *«Մըր ենք քեզ դատապարտողները»:* Յիսուս երբ տեսաւ Մովսէսեան կրօնաւորներու պարտութիւնը, Ինքն ալ որպէս գիտակից Կերտիչը մարդկային սեռային մղումներուն, ըսաւ կնոջ.

***«Ես ալ չեմ դատապարտեր քեզ.
գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանջեր»:***

Ինչ քիւրեղանման և զուլալ խօսքեր որ թռիչք առին մարդասեր Յիսուս Զրիստոսի սրտէն: Վճիռ և յստակ խօսքեր որոնք բացատրութեան պէտք չ'ունին, հասկնալի՛ են նոյնիսկ մանկանց կողմէ: ***«Ես ալ չեմ դատապար-***

«Ներքին» խօսքերը պետք է ցնցեն մեզ բոլորս նաև այսօր: Մենք որքան կը սիրենք դատել ու դատապարտել, ոչ թե *իրաւունքով*, այլ նոյնիսկ *բաւբասանքի* հետեւանով: Ի՞նչ նախճիրներ կը գործէ զրպարտութիւնն ու չարախօսութիւնը: Զգոյշ ըլլալու ենք վերեւ յիշուած մղումներէն եթէ չենք ուզեր դատուիլ փարիսեցիներու և օրինականներու շարքին:

Ինչո՞ւ Յիսուս Ի՞նք չի դատապարտեց մեղքի արարքին մէջ բռնուած կինը:

Որովհետեւ, Ս. Հոգիին առաջնորդութեամբ կ'ըսէ անտարանաջունչ Առաքեալը. երբայցիս ԺԳ. 4-րդ համարին մէջ,

«Աստուած պիտի դատէ շնացողներն ու պոռնիկները»:

Մեր առաջին գրութեան մէջ յիշած էինք թէ սեռային մղումը թէ՛ աստուածակերտ է և թէ բնագղակաւ: Այսինքն մայր բնութենէն փոխանցըւած: Սեռայնութիւնը կշռադատող և չափաւորող զօրութիւնը, մարդկային բանականութիւնը և կամեցողութիւնն են որոնք շնորհներ են Աստուծմէ տրուած մարդ-արարածին: Մարդկային մղումներու ամենադժուար սանձահարումը սեռային մղումին զսպումը կամ կարգապահութիւնն է:

Այս պատճառաւ Յիսուս ըսաւ մեղաւոր կնոջ, *«Ես ալ չեմ դատապարտեր քեզ»*. սակայն անելուց պատուէր մը տալով.

«Գնա՛, այսուհետեւ մի մեղանչեր»:

Իսկ փարիսեցիներուն և կեղծաւոր օրինականներուն Յիսուս ըսաւ.

«Վա՛յ ձեզի՝ դպիրներուդ և կեղծաւոր փարիսեցիներուդ»:

«Վա՛յ ձեզի կո՛յր առաջնորդներ որ մժղուկները կը բամէք, բայց ուղտերը կը կլլէք»:

«Աձեր, իժերու՛ ծնու նոյնք, ինչպէ՛ս պիտի փախչիք գեհե՛նի դատապարտութենէն»:

Ի՞նչ զարմանալի և անհաւատալի կը թուին Յիսուսի դատաստանական պատիժները մեր նախապաշարումներուն: Բաղդատութեան դնենք Իր դատաստանական պատիժը՝ հանրային կնոջ նկատմամբ և անդին աղօթող ու կրօնահաւատ անաղութիւնը շարունակող փարիսեցիին հանդէպ:

Սոյն երկու մեղքերու մեծագոյնը, Յիսուսի դիտանկիւնէն, կը կեդրոնանայ *կեղծաւորութեան* վրայ:

Մոռնալու չէ երբեք, որ կեղծաւորութիւնը՝ ստութիւն և խաբէբայութիւն է, այլ խօսքով հակառակն է ճշմարտութեան և իրականութեան որ է Աստուած:

Բնականին շինծո՛ւն է, դիմակաւո՛րն է որուն ետին գտնուող անձը չես տեսներ և չես կրնար գիտնալ:

Կեղծաւորութիւնը՝ նման սեռային զգացումին՝ բնական և մարդուն արարչագործութեան հետ կերտուած մղում մը չէ՛, այլ՝ դիմակ մըն է որ մարդ արարած ի՛ր ազատ կամքով և իր փառատենչիկ փափակով շինած է իրեն համար: Կեղծաւորը իր շինծու դիմակով ոչ թէ խաբե՛լ կը ջանայ միայն իր ընկեր մարդը, այլ՝ կը ջանայ, եթէ կարելի է, խաբե՛լ և խարդախել նոյնիսկ զԱստուած:

Ըստ Յիսուսաջունչ Աւետարանի յայտնութեան՝ մեծագոյն մեղքը

ԿԵՂԾԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ Է:

Փետրուար 2, 1990
Թորոնթօ

ՎԿԱՆԵՐ ՊԻՏԻ ԸԼԼԱՔ ԻՆՇԻ ՅԱՍԱՐ

Վկայ ըլլալ ունի բազմաթիւ հանգամանքներ, կացութիւններ և իմաստներ: Մուտ վկայ ըլլալ կը նշանակէ ըլլալ վատ ու անակալէզ: Ոմանք՝ իրենց նախապաշարումը կը վկայեն, ուրիշներ՝ իրենց ատելութիւնը հաճեցնելու և գոհացնելու համար կը վկայեն: Աւերակուած եկեղեցիներն ու դպրեվանքերը թէեւ քարացած, բայց խօսուն վկաներն են երգի, աղօթքի և գոհագործումի:

Օրինական վկայութիւն մը կրնայ ըլլալ բերանացի կամ գրաւոր, սակայն վկայող անձը պարտ է ըլլալ ականջալուր և ակնաստես:

Յարուցեալ Յիսուս Քրիստոսի պատուէրը Իր աջակերտներուն (վկաներ ըլլալ), ունի երկու իմաստ: Առաջին՝ *խաւնոյ* ստոյգը վկայել և յիշատակել իրենց Վարդապետին Աւետարանը, ու երկրորդ՝ ի հարկին *կեօնել* իրենց վկայութիւնը *արիւ նով*:

Հայերէն *վկայ* բառը կրօնական և հաւատքի պարունակին մէջ *նահատակութիւն* իմաստը ունի: Ըստ Հր. Աճառեանի *«նահատակ»* բառին նշանակութիւնը ձեւացած է թարգմանաբար յուն. *մարդուս* և ասոր. *նահատ* բառից, որ նշանակում է *«վկայ և նահատակ»* այսպէս է նաեւ արաբ. *շահիտ*՝ բառը:

Եկեղեցին կանգնած է աշխարհի մէջ վկայելու համար, նոր ընթացքով (կերպարանափոխուած ու սրբուած կենցաղավարութեամբ) Քրիստոսի հաւատ-բով և Անոր մահուամբ ու Յարութեամբ ենթական "նոր արարած" մը եղած է: Հաւատացեալներու վկայութիւնը ըլլալու չէ՛ միայն գրաւոր դաւանանքի մը բերանացի հաստատումը, (Նիկիական հանգանակ) այլ՝ հաւատացեալներ պարտ են կանգնիլ ամէն զոհողութեամբ, նոյնիսկ ի վնաս իրենց անձերուն ու ջանքերուն, հաւատարիմ իրենց վկայութեան և Յիսուս Քրիստոսի՝ Աւետարանին: Հայ հաւատացեալներու ապրած կեանքի հարազատախօս և կենդանի՝ վկայութիւնը (նահատակութիւն)-ն է, որ կենսանորոգ պահեց հայ Բրիստոնեան մինչեւ մեր օրերը: Բոլորանուէր անձնագոհութեամբ և նահատակութեամբ աուցուն է հայ եկեղեցական տարեգրութիւնն ու աւանդութիւնը:

Ձի բաւեր հպարտանք՝ զգալ մեր անցեալ աննկուն հաւատացեալներով ու նահատակ եկեղեցականներով միայն: Ի՞նչ է մեր հաւատքին վկայութիւնը **ա՛յսօր**: Եկեղեցին միայն աւանդեալ հաստատութիւն մը չէ՛, հապա՛ հոգի՛ն կենսաւորող ուժ մըն է: Միայն դաւանական ու վարդապետական գաղափարներու թելադրանք մը չէ՛, այլ կեանքը մտածումի կը փոխէ ու մտածումը ապրումի՝ կենսանորոգ ջարժման:

Յիսուս Քրիստոս՝ Իր համբարնալէն առաջ պատուիրեց աջակերտներուն

դառնալ Ի՛ր վկաները, որովհետեւ Ան դարձած էր կենդանի՝ Վկան Հօր Աստուծոյ անսպառ սիրոյն և ողորմութեան Գողգոթայի սարին վրայ: Բոլոր հաւատարիմ առաքեալները և սուրբերը ապրեցան նահատակութեա՛ն վկայութեամբ: Առաջին վկայուհին, Հայաստան Աշխարհին, եղաւ Սանդուխտ կոյսը, Սանատրուկ թագաւորի դուստրը:

Յաւերժաւանդ Յիսուս, մարդկութեան մէջ փնտոեց մարդկայնականը, աննենգը և հաւատարիմը, որպէսզի անոնց մէջ դրոշմէ Իր նմանութիւնը և դարձնէ զանոնք վկաներ: Անվեհեր առաքեալ Պօղոս կ'ըսէ.

*«Զրիստոսի հեա խաչը ելալ, այլեւս կենդանի եմ.
ոչ թէ ես, այլ իմ մէջս կենդանի է Զրիստոս»:*

Գաղ. Բ. 20:

Վկայե՛լ, ո՛չ թէ խօսեմով միայն, վկայե՛լ, ո՛չ թէ դրամի համար, վկայել, ո՛չ թէ պաշտօնի բերմամբ, այլ վկայել Աստուծոյ **սիրո՛յն** համար, Զրիստոսի փրկագործութեա՛ն համար, վկայել մեր կեանքին փոխակերպմա՛ն համար ու կնքել սոյն վկայութիւնը *նահատակութեամբ*.

Զրիստոնէական հաւատը գաճաճ փոքր հոգիներու հաւատալի՛ք մը չէ: Զրիստոսի հաւատացող մեր պապերը տառապանքի և մահառումի անընկճելի վահան դարձան, որովհետեւ անոնք տառապանքէն ծնած ու բիւրեղացած հաւատք ունէին: Վկայութեան հաւատը ընդհանրապէս նուիրումի և տառապանքի հնոցին մէջ կը մաքրագտուի որպէսզի վերընձիւղի ու կրկնապատիկ բողբոջի:

Այսօրուան կարգախօսը՝ նայի՛լ է, դիտե՛լ է և վերուղղել է մեր սեւեռումը դէպի Գողգոթան, դէպի Խաչելութիւն ու փրկարար տառապանքը ուրկէ ծնունդ առաւ յաւերժութեան լուսաբացը:

Յունիս 28, 1993

Թորոնթօ